

փառք հոս կը մնան . և միայն հոգին հաւատոյ զարդովը փառաւորեալ պիտի երեայ Աստուծոյ առջին : (Դառնալով ժողովրդապետը անդրանկին), ջես, ըստ , Հենրիկոս, երբ անցած ամառ հայրդ քեզի լողալու վարպետ մը բերաւ քաղքէն, նա առաջ սորվեցուց թէ ինչպէս պէտք է հաւասարակշիռ կենաս ջրոյ վրայ, և թէ ինչ շարժմունք պիտի ընես թևերովդ և ինչ ոտքերովդ . ապա տուաւ քեզ երկու փամբուշտ, որոնց մով փորձեցիր անվտանգ տեղեր լճին մէջ : Բայց քիչ մը ժամանակին կամաց կամաց անոր աւանդած դասերը ճիշդ կը կատարէիր, նա ալ փամբուշտերը վրայէդ կ'առնուր . ան ատեն կը ջանայիր մեծ զգուշութեամբ ջրոյն երեսը կենալ . եթէ սխալ շարժէիր՝ ակամայ ջուր կը կըլլէիր . և նոյն միջոցին լողալ գիտեմ ըսիր, երբ շատ փորձերով վարժեցար : Ահա նոյնպէս է և քրիստոնէական կրօնից ուսումն ալ . բաւական չէ գիտնալը հաւատոյ պատուէրը, այլ անոնց լաւ գործադրութիւնն ալ գիտնալու է :

Տղայք երկիւղածութեամբ միտք կը զնէին խրատիս ու միամուաբար եռանդնալից կը խոստանային ջրնել երեք այնպիսի գործ մը՝ որ Աստուծոյ կամացը հետ չմիաբանի :

— Եթէ այսպէս ընէք, սիրելիք, այն ատեն երջանիկ կ'ըլլաք . վասն զի ով որ զԱստուած կը վնտուէ, իսկոյն իր քովը կը գտնայ : Բայց հիմա գնացէք ձեր պարտէզը ու վաղուան դասերնիդ պատրաստեցէք . այսպէս գեռ շատ հեղձեզի խրատներ պիտի տամ դպրատունը :

Տղայք զուարթապէս քահանային ձեռքն համբուրելով գուրս ելան սենեկին : Իշխանը մեծ հաճութեամբ կը նայէր տղոց ետեէն, արդէն իմացած ըլլալով՝ որ քահանային հոգեռանդն իրը բարձր շատ տպաւորութիւն ըրեր էին անոնց վրայ : Ինչ միսիթարութիւն բարի հօր մը համար, երբ կը տեսնայ իր որդիքը այսպիսի մարդու մը ձեռքին ներքեւ : Ինքը շատ անկեղծ և ճշմարտասէր ըլլալուն՝ երկու ձեռքն ալ քահա-

նային ուղղելով սրտագին կը գոչէր . Աստուած հատուցանէ ըրածիդ փոխարէնը, ես անձամբ փոխարինելու շատ աղքատ եմ : Եթէ ամեն տեղ այսպէս կրթուէին տղայք, յայնժամկը դադրէր աշխարհս այսպէս անապատ ըլլալէ, և մեղքը հոն վայրագ գաղանի պէս շրջելով այսչափ չէր գիշատեր զմարդիկ . այլ կը դառնար աշխարհս երանաւէտ դրախտ մը :

Կը շարունակուի :

### ՅՈՎԱԿԻՄ ՌՈՍՍԻՆԻ

Դարուս գերահոչակ անձինքներէն մէկն է Յովակիմ Ռոսսինի իր երաժշտական բեղմնաւոր և արագ հանձարովը . ոչ յիտալիա և եթ՝ այլ և 'ի գաղղիա և 'ի գերմանիա կը հնչեն ոսսափնական նուագները, օտար և աննման ամեննեին Մողարի, Մայէրպերի, Կլիւքի, և այլն, մեծահոչակ վարժապետաց յօրինածներէն : Այնչափ աշխարհածանօթ է Ռոսսինի և ամենուն հիացմանն առիթ՝ մինչև Սուէնտհալ գերմանացի հեղինակ մը, այսպէս իր գովիստը կ'ընէ . « Նափուէսնի մահուրնէ վերջը, գտնուեցաւ ուրիշ մը, որուն վրայ ալ ինչպէս առաջնոյն, ամեն օր կը խօսուի, Մոսկուայէն մինչև Նափոլի, Լոնտրայէն ցլիէննա, Բարիզէն 'ի կալկադա : Այս մարդուս համբաւն ուրիշ սահման չի ճանչնար, բաց 'ի քաղաքականութեան սահմանէն ... և ինքը 32 տարեկան է » : Չենք տարակուսիր որ ազգայնոց շատերն ալ զմայլած ըլլան անմահ վարժապետին նորագիւտ և ներդաշնակ նուագներովը, և շատ անգամ դաշնակաւ անոնց մով զուարճացած, որուն վարուց համառօտութիւնն ալ հետաքնին ըլլայ իրենց :

Ծնաւ Յ . Ռոսսինի 'ի բեղարոյ, յամին 1792 փետրուարի 29ին, աղքատ ծնողացմէկ հատիկ զաւակ . իր քաղցրաձայն մայրն Աննա Ռոսսինի թէպէտ անտեղեակ երաժշտութեան, սակայն բնածին

յաջողակութիւն մ'ունէր նուազաց, և  
ընտանեզք Պոլոնեա երթալով, հոն ամե-  
նամեծ յաջողութեամբ սկսաւ թատերց  
մէջ երգել. և վերջը քաղքէ քաղաք շրր-  
ջելով առաջին էր թատերց մէջ յառա-  
ջին կանայս: Յովակիմ ալ 'ի մանկու-  
թենէ իր ծնողաց հետ այս ճամբորդու-  
թիւնները կ'ընէր, և թատերաց մէկ  
անկիւնը քաշուած ուշադիր մտիկ կ'ը-  
նէր փորձից և ներկայացուցմանց: Ա-  
սանկով իր ականջը և զգացմունքները  
կրթեցան և տասը տարեկան եղած  
ժամանակ՝ պորտած էր իր Յովաչի Ռոս-  
սինի հօրմէն եղջիւր՝ <sup>1</sup> հնչեցընել:

Տասը տասուերկու տարեկան եղած  
ժամանակը, ուզելով ծնողը տղուն  
ձայնին դեղեցկութենէն օգուտ քաղել,  
զինքը քաջ երգիչ մ'ընելով՝ կանոնա-  
ւոր երաժշտութեան ուսման զրին զին-  
քը. սակայն առաջին դպրոցէն օգուտ  
մը չքաղելով, ուրիշ դպրոց մը զրին  
զինքը, ուր մէկ տարուան մէջ լաւ կը-  
կարդար երաժշտական նշանները, քաջ  
կը համաձայնէր և կտրիճ երգեցիկ էր:  
Պոլոնեա և շրջակայ քաղաքները եկե-  
ղեցական հանդէս չէր ըլլար որ Յո-  
վակիմ չկանչուէր. և քիչ ատենուան  
մէջ սկսաւ ընկերել մօրը, թատերաց  
մէջ զախակը զարնելով և երաժշտաց  
զլուխ անցնելով: 1807ին երգոց շարա-  
դրութիւն սորուելու համար Պոլոնեայի  
Լիկէոնը մտաւ, ուր Մատթէի անուամբ  
քահանայ մը վարպետ ունեցաւ: Բայց  
զեռ քահանայիս աշակերտութեան չի  
մտած, պղտի երգեր յօրինած էր երկու  
եղջիւրով նուազելու, զորս հօրը հետ  
կը հնչեցընէր. և այս նուազները շա-  
րադրած էր, մինչդեռ ամենեխն անտե-  
ղեակ էր ներդաշնակութեան կանոնաց,  
և ուրիշ առաջնորդ չունէր իրեն բաց 'ի  
բնական բերմանէն: Վեց ամիս վերցի-  
շեալ քահանային քով սորուելէն վեր-  
ջը, սկսաւ Ռոսաբինի տարակուսիլ, վրի-  
պակներ, անհամաձայն ներդաշնակու-  
թիւններ գտնալով նշանաց և ձայնից  
մէջ: Լիկէոնին զրատան մէջ փակուած

ամբողջ օրեր հոն կ'անցընէր, Հայտը-  
նի, Մողարի զլուխ գործոց վրայ կըր-  
թութիւն բնելու: Եւ այսպէս ամենա-  
քիչ ժամանակի մէջ շատ յառաջացաւ,  
ոչ այնչափ երաժշտութեան օրէնքները  
սորուխ ուզելով, որչափ իր հանճարո-  
վը փորձառական կերպով վարժելով: 1808ին տասնուվեց տարեկան էր եր-  
բոր Պոլոնեայի մէջ յօրինեց համերգու-  
թիւն <sup>1</sup> և ցուց <sup>2</sup> մը: Երկու տարի վեր-  
ջը բերդիքարեայ խնամքն և օգնու-  
թեամբ ներկայացոյց 'ի վենետիկ Սուրբ  
Մովսէս անուամբ թատրոնը՝ իր առաջին  
շինած մէկ հանդէսով թատրերգն <sup>3</sup>, ֆո-  
խանակագիր <sup>4</sup> ամուսնութե անուամբ.  
այս թատրերգն միջակ ելք մ'ունեցաւ.  
մինչդեռ միւսը, Այլանդակ երկդիմի <sup>5</sup>  
ըսուածն, որ 1814ին 'ի Պոլոնեա ներ-  
կայացուեցաւ՝ ամենեխն իսկ ծափա-  
հարութիւն չի դտաւ: Շատ աւելի յա-  
ջող ելք ունեցաւ 1812ին 'ի Հռովման դե-  
մետրիոս և Պոլիբիոս <sup>6</sup> անուամբ յօրի-  
նածը, զոր նախլինթացներէն առաջ  
իսկ յօրինած էր: Բայց երիտասարդ  
վարժապետիս քսաներորդ տարին ան-  
հաւատալի ճոխ և բիւրաբեղուն տարի  
մ'է, յորում վենետիկոյ, Ֆէրրարայի,  
Հռովմայ և Միլանու համար հինգ թա-  
տրերգ յօրինեց. Երջանիկ պատրանք <sup>7</sup>,  
փորձաքար <sup>8</sup>, կիւրոս 'ի Բարիլոն <sup>9</sup>, Սան-  
գուղ ասուեայ <sup>10</sup>, Դէպք գործեն զգող <sup>11</sup>:  
1813ին վենետիկոյ երեք թատերց հա-  
մար երեք թատրերգ յօրինեց. Որդի ըստ  
զիպաց <sup>12</sup>. Դանզբետի <sup>13</sup> և իտալուհի  
յԱլճէրի <sup>14</sup>. այս երկու յետինքը՝ մա-

1 Sinfonia.

2 Cantata.

3 Opera.

4 La cambiale di matrimonio.

5 Equivoco stravagante.

6 Demetrio e Polibio.

7 L'inganno felice.

8 La pietra del paragone.

9 Ciro in Babilonia.

10 La scala di seta.

11 L'occasione fa il ladro.

12 Il figlio per azzardo.

13 Tancredi.

14 L'Italiana in Algeri.

նաւանդ Դանդրետին՝ յաղթական և  
փառաւոր ելք մ'ունեցաւ:

Զարմանալի արագութեամբ 'ի լոյս  
ընծայեց դարձեալ 1814ին Աւրելիա-  
նոս 'ի Պալմիրա<sup>1</sup>, Տաճիկն յիտալիա<sup>2</sup>,  
Եկլէ և Եռինէ<sup>3</sup>, Եղիսաբեթ<sup>4</sup>, Սափրիչն  
Միվիլիոյ<sup>5</sup>: 1816ին Օդելլյ<sup>6</sup>, Զենե-  
րենդոլա<sup>7</sup>, Անծեղն գող<sup>8</sup>, Դորվալտոս  
և Դորլիսգա<sup>9</sup>, Արմիդա<sup>10</sup>:

Առաջին անդամներոր Սափրիչն Սի-  
վիլիոյ թատր ելաւ 'ի Հռովմ' Բահղիէլ-  
լյի բարեկամները ջանացին Բեզա-  
րացւոյն յօրինածը եպերել, բարձրա-  
ցընել ուզելով Բահղիէլյինը՝ որ ան  
ալ յօրինած էր նոյն նիւթը . բայց եր-  
կրորդ ներկայացուցումը այնպիսի յա-  
ջող ելք և ընդունելութիւն մ'ունեցաւ՝  
որուն յաղթանակը բոլոր յիտալիան և  
աշխարհ ճանչցաւ, և մեծ վարժապե-  
տիս առաջին փառքերէն մէկն է:

Յամին 1818ի լոյս հանեց զլրովսէս<sup>11</sup>.  
1819ին զեկին Ծակին<sup>12</sup>. 1820ին զՄէհ-  
մէտ<sup>13</sup>, զԵղուարդ և Քրիստինէ<sup>14</sup>, բաց  
'ի ուրիշ վեց թատրերգներէ, զորոնք  
Բարբայա մականուամբ հարուստ Նաբո-  
լիդանցիի մը համար յօրինեց, որուն  
հետ շատ տարիներէ 'ի վեր դաշնադրեալ  
էր: Եւ 1822ին ամուսնացաւ Գոլպրանդ  
առաջին գուսան օրիորդին հետ, որ  
հաղորդ և մասնակից եղաւ անոր փա-  
ռացն 'ի վիէննա. և իր յօրինածներն  
որ 'ի Պէոլին այնշափ հաճոյ անցած  
չէին 'ի վիէննա և 'ի բովանդակ Աւ-  
տորիա մեծ ընդունելութիւն գտան:  
1823ին Շամիրամն<sup>15</sup> յօրինեց նոյն տար-  
ւոյն վենետիոյ բարեկենդանին համար.

1 Aureliano in Palmira.

2 Il Turco in Italia.

3 Egle e Irene.

4 Elisabetta.

5 Il Barbiere di Siviglia.

6 Otello.

7 La Cenerentola.

8 La Gazza ladra.

9 Dorvaldo e Dorlisca.

10 Armida.

11 Mosè.

12 La donna del lago.

13 Maometto.

14 Edoardo e Cristina.

15 Semiramide.

բայց Կնճուեալ և գրեթէ գերմանական  
գեղեցկութեամբ յօրինեալ թատրերգէ  
մը իտալական ժողովուրդը չէր կրնար  
համ առնուլ և չառաւ: Ասոր վրայ  
Ռոսսինի տուաւ իր յետին հրաժեշտը  
իտալական թատրոց և յԱնգղիա ան-  
ցաւ, ուր հինգ ամսուան վարժապետու-  
թեամբը և տուած արուեստականներո-  
վը<sup>1</sup> 250,000 ֆրանք շահեցաւ և տար-  
ւոյն վերջերը Բարիզ անցաւ: ուր կարո-  
լոս Ժէ պսակմանը համար յօրինեց Ճա-  
նապարհորդութիւն 'ի Ուէյն<sup>2</sup>. սոյն  
թագաւորը ասպետ անուանեց զինքը  
Լեգէոնի պատուոյն, և ընդհանուր տե-  
սուչ երաժշտական վարժոցաց, 20,000  
ֆր. տարեկան հասոյթով: Դարձեալ  
փոխանակ Բահղիէլյոյի, որ քիչ առաջ  
վաղճանած էր, Գաղղիական ճեմարա-  
նին արտաքին անդամ անուանեցաւ:  
1828ին գրեց կոմն Օրի<sup>3</sup>. և հուսկ յե-  
տոյ 1829ին գուլիէլմոս Դէլ<sup>4</sup>: Աշխոյժ  
և հրաշակերտ յօրինուած մ'է սա, և իր  
տեղութիւնը դարուց հետ պիտի համ-  
րուի: որուն ինչ գովիստ ալ ուզուի տալ  
դեռ կրնայ ըսուիլ որ անոր փառացը  
բան մը չառաւելուր. և սակայն սկրզ-  
բան չունեցաւ այն ընդունելութիւնը՝  
որուն արժանաւոր էր, մինչեւ Տիւրբէի  
քաղցը ձայնը և հանճարը և 1830ի  
խոռվութիւնը՝ արթընցուց զհասարա-  
կութիւնը այնպիսի կատարեալ և գե-  
րազանց կերտուածոյ մը յարդը ճանչ-  
նալ: Սակայն շատ ուշ: Ռոսսինի մինչ-  
դեռ իրեն արդար փառաց յաղթանակին  
կը սպասէր, այս աստիճան անարդար  
ընդունելութեան հանդիպելէն վերջը՝  
երսունեօթը տարեկան թողուց և հրա-  
ժարեցաւ բոլորովին թատրոնէ, և 1836ին  
Ելլալով Բարիզէն՝ զնաց 'ի Պոլնեա բնա-  
կելու, ուր ունեցած պալատը ճոխու-  
թեան ամենայն զարդուքը զարդարած  
էր. մինչդեռ կ'ըսուի թէ Բարիզ եղած  
ժամանակին ամենախեղճ կերպով կ'ա-  
պրի եղեր: Մինչեւ 1848 Պոլնեա կե-

1 Concerto.

2 Il viaggio a Reims.

3 Conte d'Ory.

4 Guglielmo Tell.



Gioachino Rossini

ցաւ, դատարկ կենօք հրաժարելով՝ մա-  
նաւանդ թէ ըսենք զզուելով՝ երաժշշ-  
տութենէ, այն որ զինքն անմահացոյց .  
միայն 1844ին մի անգամ մը ևեթ իր  
անգործութենէն երևալ ցըցուց, հրա-  
տարակելով՝ ութ տարի առաջ յօրի-  
նած գեղեցիկ կայր առ խաչին աւագ  
ուրբաթու երգը : Եւ 1845ին իր առջի  
ամուսինը վախճանելով, երկրորդ ան-  
գամ Տ. Օ. Բէլիսքէի հետ ամուսնա-  
ցաւ: 1848ին Պոլոնեայէն ելլալով և քա-  
նի մը տարի Ֆիորենցա անցընելէն վեր-  
ջը 1855ին դարձաւ 'ի բարիդ ուր ան-  
ցուց մնացած կեանքը : Եւ սակայն թէ-  
պէտ այս միջոցին իր հանճարոյն փառ-  
քը և գովեստը չի զլացուեցաւ, բայց և  
այնու չիփոխեց Ռոսսինի իր ընթացքը  
և հանճարոյն նոր արգասիքներ չընծա-  
յեց հասարակութեան, բաց 'ի քանի  
մը պղտի յօրինուածներէ. ինչպէս Սըր-  
բազան Պապին Պիոսի թէ խնդրանգը  
շինած պատարագը, և այլ քանի մը եր-  
գեր. դարձեալ այլ և այլ պատառներ  
կէս տպազրեալ և կէս անտիպ. և 'ի  
վեր քան զատնկ՝ նոր պատարագ մը,  
զոր վարժապետը ուզած չէ բնաւ տպա-  
զրել, այլ արուեստագէտք կը վկայեն  
թէ հիանալի գեղեցկութեամբ լի է:  
վախճանեցաւ դարուս առաջին երևե-  
լի երաժիշտ հանճարն Ռոսսինի 1869  
նոյ. 13ին . բայց քանի տարօրինակ են  
մէկմէկէ իր աշխարհի մուտքը եկբէն.  
աննշան ծնողաց զաւակ, ոչ ոք իմացաւ  
իր ծնունդը և խօսեցաւ վրան բաց 'ի  
իր ծնողացմէ և յազգականաց. իսկ իր  
մահը ընդ աշխարհ ամենայն հնչեց.  
աննշան մտաւ յաշխարհ, բայց գիտա-  
ւորի մը պէս իր ծածկուելէն վերջն ալ  
լուսաւոր գէսին երկայնքը դարուց վրայ  
տարածած ծածկուեցաւ:

## ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Մամացը :

(Տես Երես 78)

Այսօր, ազնիւ օրիորդ, մեր պատմու-  
թիւնը սկըսելով նոր բառի մը պիտոր  
ծանօթանանք : Կ'ախորժէի լուութեամբ  
անցնել զայն, որովհետև ոչ աղուոր է  
և ոչ աղէկ շինուած . սակայն կարելի չէ:

Գիտես որ մեր մարմարն ներսը ե-  
ղած ամեն բաներուն անծանօթ կնքա-  
հայրները, ստամոքսէն ելած խիւսին  
խախաց անտեղի անունը տուեր են :  
Ասոր վրայ բաւական խօսեցանք, և դու-  
ալ կը ճանչնաս զայն : Կ'երեսայ թէ իր  
երեսոյթը անոնց ախորժելի անցեր է, ո-  
րովհետև պղտի փոփոխութեամբ մը նո-  
րէն անոր դարձեր են, երբ հարկ եղեր  
է խախացին ոգին մլրտել, այն օդտա-  
կար մասը որ արեան մէջ պիտոր երթայ  
խառնուի, զոր մենք մէջերնիւ՝ ուտե-  
լեաց ուկին կոչեցինք . և զայն կոչեր են  
Մամաց : Այս բառը ինչպէս որ ինծի  
աւանդեցին՝ նոյնպէս ես ալ քեզի կ'ա-  
ւանդեմ, ու ձեռքս կը լուամ:

Քեզի զուրցած էի որ գտնուելու էր  
միջոց մը՝ մամացը աղեաց խողովակէն  
գուրս հանելու : Այդ միջոցը շատ պարզ  
է : Այն պղտի աւելածուաց՝ որոնց վրայ  
վերջին անգամ խօսեցանք, մեծ գունդ  
մը բոլոր նրբաղիքին երկայնութեամբը,  
և զլիսաւորաբար առաջնաղիքին շրջա-  
կայքը, պատերազմի կարգով շարուած  
կեցած են : Հոն, հազար ու մէկ պղտի  
խողովակներ, ամենայն ուղղութեամբ  
դէպ 'ի աղիքին երեսը կու գան և անոր  
մաշկը ծակ ծակ կ'ընեն, որոնք՝ ինչպէս  
մշտաբաց կոկորդներ՝ քանի որ մամա-  
ցին կաթլիկները կը ձևանան, հետ-  
զհետէ կը ծծեն զանոնք : Ասոնց անու-  
նը մամացարեր խողովակք անուաներ  
են: Քեզի ըսած եմ թէ աղեաց ներսի